



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 18 » փետրվարի 2020թ. 17-ը

ք. Երևան

ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՃԱՐՄԱՆ ԳՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը և ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2012 թ. դեկտեմբերի 21-ի «Չափման միջոցների փորձարկումների և տեսակի հաստատման կարգը սահմանելու մասին» N 1060-Ն հրամանով հաստատված Կարգի 11-րդ կետի դրույթների կատարումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել չափման միջոցների տեսակի հաստատման համար վճարման ենթակա աշխատանքների ցանկը և դրանց վճարման գները համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի կողմից 2017 թ. հունիսի 1-ին հաստատված «Չափման միջոցների տեսակի հաստատման համար վճարման ենթակա աշխատանքների ցանկի և դրանց վճարման գների հաստատման մասին» N 15-Վ հրամանը:
3. Մույն հրամանը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:
4. Մույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ Արմեն Ոսկանյանին:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱԼԲԵՐՏ ԲԱԲՈՅԱՆ

Հավելված

«Չափագիտության ազգային
ինստիտուտ» ՓԲԸ

տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Բաբայան

« _____ » _____ 2020թ. _____

ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՃԱՐՄԱՆ ԳՆԵՐԸ

Իրականացվող աշխատանքը	Աշխատանքի համար վճարվող գումարի չափը (դրամ)	Ծանոթություն
Փաստաթղթերի ձևակերպում	3000	Մեկ հայտի համար
Նախկինում տեսակը հաստատված չափման միջոցի համապատասխանության փորձարկում	5000	Մեկ տեսակի համար
Չափման միջոցի տեսակի հաստատման փորձարկում	10 000	Պարզ, միասահման չափման միջոցի մեկ տեսակի համար
Չափման միջոցի տեսակի հաստատման փորձարկում	15 000	Բարդ ֆունկցիոնալ չափման միջոցի մեկ տեսակի համար
Չափման միջոցի տեսակի հաստատման փորձարկում	20 000	Բարդ չափողական համակարգի մեկ տեսակի համար
Ստուգաչափման մեթոդիկայի մշակման խորհրդատվություն	10 000	Պարզ, միասահման չափման միջոցի մեկ տեսակի համար
Ստուգաչափման մեթոդիկայի մշակման խորհրդատվություն	15 000	Բարդ ֆունկցիոնալ չափման միջոցի մեկ տեսակի համար
Ստուգաչափման մեթոդիկայի մշակման խորհրդատվություն	20 000	Բարդ չափողական համակարգի մեկ տեսակի համար